# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.11.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/40**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2017թ. ներկայացված՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը փոփոխելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու կամ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/11» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2017/40 բողոքն առանց քննության թողնելու մասին «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի 13.11.2017թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների

բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ